



80. ԱՆԳԵՏ ԹԱԳԱՎՈՐ

Կէղնի, շէղնի՝ թագավոր մե կէղնի, էդ թագավոր գելնա էրկրոց-
էրկիր կը ձենձրնե թե՛ ռ՛ր մարդ օր չիգա ընձի խոսք մե ըսե՛ շա-
ժենա փարե մե՛ էնոր խուրջի մ՛օսկի կիտամ»:

Օր մե հնարագետ աղքատ մե կըսե.

— Զա՛նըմ, չորի՞ն իմ պարապ նստի տուն, չեղնամ էրթամ
մըտ թագավոր, զէն դարտակ խոսքն ըսիմ, փարեն առնիմ գամ:
Մարդ գիկա, կը տնկվի թագավորի յառեջ:

— Թագավոր ապրած կենա, դու Բուրսա գացե՞ր իս:

— Զէ՛, Բուրսա չըմ գացերի:

— Ծա լե Բուրսա չըմ գացերի:

— Է՞, թե ինչ:

— Ըշտե է՛ն խոսք, օր փարե մե շաժե,— կըսե աղքատ:

Մարդ կառնե զխուրջի օսկին, գիկա տուն ու, կըսին, շուրի
չըսօր կը ծիծղա վըր անգետ թագավորին:

